ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 534-Ա **03 նոյեմբերի 2023 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 223-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2012 թվականի հոկտեմբերի 30-ի «Աղետների ռիսկերի նվազեցման Գեղարքունիքի մարզային թիմ ստեղծելու մասին» N 223-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածը՝ աղետների ռիսկերի նվազեցման Գեղարքունիքի մարզային թիմի կազմը, շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

2) որոշման 2.1-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«2.1. Աղետների ռիսկերի նվազեցման Գեղարքունիքի մարզային թիմի գործունեության համակարգումը վերապահել մարզպետի տեղակալ Ռուբիկ Նավոյանին:»:

03.11.2023

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Подписано: SARGSYAN KAREN 3710840503

ՄԱՐԶՊԵՏ՝
Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Գավառ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2023 թվականի նոյեմբերի 3 -ի
N 534-Ա որոշման

«Հավելված
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2012 թ. հոկտեմբերի 30 -ի
N 223 - Ա որոշման

ԿԱԶՄ
ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԹԻՄԻ

Թիմի ղեկավար՝

Ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետ

Թիմի անդամներ՝

Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ

Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ

Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ

Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության մշակույթի և սպորտի վարչության պետ

Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ

Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ

Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ

Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի **վ**արչության գլխավոր մասնագետ, **քարտուղար**»:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ս. ԽԼՂԱԹՅԱՆ